

Ն. ԱՂՈՆՑԻ «ՀԱՅՈՑ ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ
(Ծննդյան 130-ամյակի առթիվ)

ՊԵՏՐՈՍ ԼՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1946թ. Փարիզում ֆրանսերենով, հետմահու, լույս տեսավ ականավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի (1871–1942) «Հայաստանի պատմություն: Ակունքները. X–VI դդ. մ.թ.ա.» սովորածավալ աշխատությունը, որը ներկայացնում էր նշված ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքական պատմության և ներքին կյանքի մանրամասները¹: Բնական է, որ այս

գրքում հիմնական շեշտը գրված էր ուրարտական պատմաշրջանի (մ.թ.ա. IX–VI դդ.) իրադարձությունների վրա: Դա է պատճառը, որ պատմագիտության մեջ տարբեր առիթներով կարծիք է հայտնվել, թե իրր Ն. Ադոնցը կյանքի վերջին շրջանում լրջորեն զբաղվել է Ուրարտուի պատմության ուսումնասիրություններ և նրա այդ հետադուտության արդյունքները տեղ են դրել նշված գրքում²: Քննադատությունը ևս, թեև արժանվույն դնահատեց կատարված վիթխարի ու կարևոր աշխատանքը³, սակայն միևնույն ժամանակ տարակուսանք արտահայտեց: Հայտնի է, որ Ն. Ադոնցը և՛ կրթությամբ և՛ նախասիրություններով միջնադարագետ էր, համաշխարհային համբավ ու ճանաչում ունեցող ըյուղանդագետ:



Nicolas ADONTZ

Սույն րնագավառին վերաբերող նրա կարևոր հոդվածները լույս էին տեսնում եվրոպական նշանավոր ըյուղանագագիտական հանդեսների էջերում,

1 Nicolas Adontz. Histoire d'Arménie. Les origines du X siècle au VI (Av. J. C.). Paris, 1946, 445 p. (այսուհետև՝ NAHA): Տե՛ս նաև սույն գրքի Վ. Պ. Սեղրոսյանի հայերեն թարգմանությունը. Երևան, 1972, 430 էջ (այսուհետև՝ ՆԱՀՊ):

2 Ն. Վ. Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ Ա Ն. Նիկողայոս Ադոնցը և ուրարտագիտությունը. – «Պատմա-բանասիրական հանդես», 1997, № 2, էջ 215–224:

3 Գրախոսությունները տե՛ս «Էջմիածին», 1947, մայիս–հունիս, էջ 90, «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1948, № 28, էջ 683–685, № 31, էջ 730–731, № 33–39, «Հայրենիք», Բոստոն, 1950, № 4(291), էջ 112:

և մեծադուլն պատիվ էր համարվում նրա համագործակցությունը համաշխարհային բյուզանդագիտական կենտրոնների հետ: Սակայն ինչո՞վ էր պայմանավորված նշանավոր բյուզանդագետի, այն էլ կյանքի վերջալույսին, այդ անսպասելի հրապուրանքը բյուզանդագիտությունը և իր նախասիրած պատմաչրջանից կտրուկ շրջադարձը դեպի Հայաստանի պատմական անցյալի հեռավոր խորքերը՝ մ.թ.ա. X–VI դարերը:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ն. Ադոնցը երբեք էլ նպատակ չի ունեցել հատուկ դադարվելու Ուրարտուի պատմության ուսումնասիրությունում, և հին Հայաստանի պատմությունը նվիրված խնդրո առարկա գիրքը չպետք է գիտել նշված պարագծում: Իրականում խոսքն ավելի մեծ ու վիթխարի մեկ այլ աշխատանքի մասին էր՝ բաղմահատոր մի աշխատություն, որտեղ Ուրարտուի պատմությունը նվիրված հատվածը միայն մի մասն էր կազմելու այն ամբողջի, որ անվանի պատմաբանը պատրաստվում էր կյանքի կոչել օր առաջ: Նրա կյանքի մեծ ու վեհ նպատակն էր ստեղծել «Հայոց քննական պատմություն», մի բաղմահատոր աշխատություն, որը բոլոր առումներով նորույթ կլիներ բովանդակ հայագիտական գրականության մեջ: Միևնույն ժամանակ այն կհամապատասխաներ եվրոպական չափանիշներին և օտարներին կներկայացներ հայ ժողովրդի գիտական ու անաչառ պատմության լուսաբանումը:

Համակարգված և համընդհանուր հայոց պատմության գիրք ստեղծելու գաղափարը Ադոնցի մոտ ծագել էր գեոևս 1920-ական թվականների վերջերին, երբ Փարիզում գործող Սանասարյան ժողովրդական համալսարանի⁴ ուսանողների համար վարում էր «Հայոց պատմություն» դասընթացը: Նրա ունկնդիրներից Հ. Պերպերյանը վկայում է. «Յրանսահայ երիտասարդ գրողների «Յարգող» միությունը Փարիզի մեջ 1927-են 1928-ի տարիներուն հաստատեց ժողովրդական համալսարան մը, բաղմաթիվ ճյուղերով: Հայագիտության բաժինն էլ հանձնված էր փրոֆ. Ն. Ադոնցին, ուր բաղմահմուտ գիտնականը կը դասավանդեր Հայոց քննական պատմություն»⁵: Թեև համալսարանը կարճ կյանք ունեցավ և պարամունքները շուտով դադարեցին, սակայն Ն. Ադոնցը շարունակում էր հայոց պատմության տարբեր պատմաչրջանների վերաբերյալ դասախոսություններով հանգես դալ երիտասարդական, ուսանողական, գրական, արվեստագիտական և այլ միությունների հրավիրած հանգեսների ժամանակ⁶: Տարիների ընթացքում նա այդ նյութերը սկսում էր դասավարդել և ենթարկել մի ընդհանուր համակարգի, թեև «Հայոց պատմության» ստեղծման աշխատանքները կանոնավոր ու հետևողական ընթացքի մեջ գնելու ուղղությամբ որևէ գործնական քայլ չի ձեռնարկում: Իրյուսել տեղափոխվելուց հետո (1931թ. աշուն), որտեղ դիտավորում էր տեղի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնը և դասավանդում «հայագիտա-

4 Սանասարյան համալսարանի և Ադոնցի պարամունքների մասին. — «Յառաջ», Փարիզ, 1928, 13, 17 հունիսի: «Հայրենիք», Բոստոն, 1928, №5, էջ 174–175:

5 Հ. Պերպերյան. Քրոնիկ. Փրոֆ. Ն. Ադոնց. — «Զվարթնոց», Փարիզ, 1944, էջ 233: Հմմտ. «Յառաջ», 1928, 13 հունիսի:

6 «Հայ մշակույթի օր», Փարիզ, 1932, էջ 153–155:

կան և Հայ-բյուզանդական խնդիրների սահմաններում»⁷, Ազոնցի համար առավել նպաստավոր հնարավորություններ են ստեղծվում իր ծրագիրն իրականացնելու համար: Հիմնական արգելքը հայագիտական գրքերի, մանավանդ հայաստանյան հրատարակությունների, պակասն էր: Նույն օրերին Լոնդոն Արշակ Սաֆրաստյանին հղած նամակներից մեկում գանգատվում է. «Այստեղ գրքերի սով է, որ շատ է դժվարացնում աշխատությունս (խոսքը «Հայոց պատմության» մասին է – Պ. Հ.) պատրաստումը»⁸: Նույն նամակով նա Սաֆրաստյանին է գրում հետևյալ խնդրանքով. «Մի անգամ ասացիք ինձ, եթե չեմ սխալվում, որ Աշխարհարեկ Քալանթարի մի հնագիտական աշխատություն ունեք»⁹: Եթե կարող եք, խնդրեմ զրկեք ինձ մի քանի ժամանակով»: Դժվար չէ ենթադրել, որ Հայաստանի հնագիտությանը վերաբերող Ա. Քալանթարի աշխատությունն Ազոնցին անհրաժեշտ էր ոչ միայն սոսկ ընթերցանության, այլ գիտական ուսումնասիրությունների համար: Ա. Սաֆրաստյանն ինքը հավաստում է. «Վերջին անգամ սիրելի Ազոնցին տեսա 1938-ին, իր մնայուն գանգատն էր գիրք չունենալն»¹⁰: Արդյոք նույն նպատակով չէր, որ Երուսաղեմի, Վիեննայի, Վենետիկի, Փարիզի հայագիտական հիմնարկներից ու անհատ հայագետներից պարբերաբար գրքեր էր խնդրում: Այսպես, 1939 թվականի ընթացքում նա Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանից խնդրել է Ն. Ակիմյանի «Զաքարիա եպիսկոպոս Գնունյանց», «Կյուրիոն կաթողիկոս վրաց», Երեմիա Դյոմուրճյանի «Ատամպոլոյ պատմություն» ուսումնասիրությունները և բազմաթիվ այլ գրքեր¹¹:

Ինչպես ականերե է, թեև Ն. Ազոնցը վաղուց էր մտորում «Հայոց քննական պատմություն» ստեղծելու մասին և անգամ նախապարասական ինչ-ինչ աշխատանքներ էր ձեռնարկել, սակայն առարկայորեն իր ծրագրերն սկսեց իրականացնել միայն 1930-ական թվականների վերջերին: Դա պայմանավորված էր երկու կարևոր հանգամանքներով: Հետեղեռնյան շրջանում բազմաթիվ հայեր հաստատվել էին Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում: Հայ գաղթականների թշվառ ու անտերունջ վիճակը, եվրոպական քաղաքներից շրջանակներում հայերի նկատմամբ տարածված արհամարհական վերաբերմունքը թյուր կարծիքներ էին ստեղծել հայերի մասին, որպես ժողովրդի: Հաճախ, մասնավորապես Գերմանիայում և Ֆրանսիայում, հայերը գիտվում էին որպես անլիարժեք, անհայրենիք ու պատմություն չունեցող մի ժողովուրդ: գրանից հետևող ճնշումների, հետապնդումների, բացահայտ քամահրական վերաբերմունքի անցանկալի դրսևորումներով: Անշուշտ, Ազոնցից առաջ բավականին հետևողական աշխատանք կատարվել էր հայերի նկատմամբ նման թյուրմբռնումները

7 Տե՛ս Հ. Ա. Ղ. ա մ յ ա ն. Ն. Ազոնցի նամակները. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 118:

8 Տե՛ս ՀՀ Մամուլի և դրականության պետական կենտրոնական արխիվ, Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, 412, ցուցակ 1, դործ 872, թ. 4:

9 Կարծում ենք խոսքը վերաբերում է Ա. Քալանթարի «Քարե դարը Հայաստանում» աշխատությանը. – «Նորք», Երևան, 1925, № 5, 6:

10 Ա. Ս ա ֆ Ր ա ս տ յ ա ն. Ուսուցչապետ Ն. Ազոնցի պատմություն Հայաստանի. – «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1948, № 31, էջ 730:

11 Տե՛ս Վիեննայի Մխիթարյան միաբանության արխիվ, պրոֆ. Ն. Ազոնցի ֆոնդ, № 32:

սրբագրելու ուղղությամբ: Այստեղ պետք է հիշատակել այն վիթխարի ծառայությունը, որ մատուցել է Հայությանը նշանավոր մտավորական Արշակ Չոպանյանը: Նա Ադոնցից ավելի վաղ Հայության մասին Ֆրանսերեն բաղմահատոր մի աշխատության ծրագիր էր հղացել և մասամբ իրականացրել: Ա. Չոպանյանի ջանքերով եվրոպական Հասարակայնությունն էին ներկայացվել Հայ գրականությունն ու մանրանկարչությունը, ընդհանրապես արվեստին վերաբերող «Վարդենիք Հայաստանեայց» եռահատոր պատկանելի աշխատությունը¹²: Ցնցող էր ու անկրկնելի Չոպանյանի այս հատորների տպավորությունը եվրոպական գրական-Հասարակական միջավայրում: Դրանք ոչ միայն կարևոր դեր խաղացին Հայ մշակույթի տարածման և պրոպագանդման, այլև Հայերի՝ որպես ժողովրդի մասին առավել դրական, ամբողջական ու ճիշտ պատկերացում կազմելու գործում: Ծիշտ է նկատված, որ Չոպանյանի այս գործը «հուշարձան էր եվրոպայի սրտում ի պատիվ Հայ մշակույթի»¹³:

Սակայն որքան էլ որ կարևոր ու անգնահատելի էր Ա. Չոպանյանի կատարած դերը՝ Հայերին եվրոպական Հասարակայնությունը ներկայացնելու ուղղությամբ, բայց այն բավարար չէր: Անհրաժեշտ էր նաև Հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի պատմագիտական վերլուծության միջոցով վեր հանել ու ցույց տալ նրա տեղն ու դերը Համաշխարհային պատմության մեջ: Անհրաժեշտ էր ստեղծել Չոպանյանի նշված աշխատությանը հավասար, սակայն զուտ պատմագիտական մի երկ, որն ընթերցելուց հետո կարելի կլիներ ասել՝ «Ահա մի ժողովուրդ՝ մեծ իր հանճարով, երազով ու ողբերգությամբ» (Ա. Իսահակյան)¹⁴: Անհրաժեշտ էր ստեղծել մի աշխատություն, որի շնորհիվ աշխարհը ճիշտ պատկերացում կկազմեր Հայերի բնօրրանի, նրանց զարգացման օրինաչափությունների, ապրած ցնցումների, տարածքային ու մարզկային կորուստների մասին, կիմանալը գառը և սոսկալի ճշմարտությունը Հայերի վերջերս ապրած ահավոր ողբերգության, նրա տարագիր ու թշվառ վիճակի իրական պատճառների մասին:

Ահա թե ինչու «Հայոց քննական պատմություն» աշխատության գրելն Ադոնցի համար անհրաժեշտություն էր, դա լինելու էր նրա հավատամքը, պարտքն ու տուրքը իրեն ծնող ժողովրդի, հեռավոր Հայրենիքի հանդեպ: Ուրիշ ո՞վ, եթե ոչ ինքը՝ բազմաթիվ լեզուների քաղածանոթ, պատմագիտական հզոր պատրաստության տեր, համեմատական ճանաչում և հեղինակություն վայելող պատմաբանը, շուրջ 40 տարի իրեն Հայոց պատմության հիմնահարցերի մշակմանը նվիրած գիտնականը, պիտի ձեռնարկեր նման մի պատասխանատու աշխատանքի ստեղծումը: Եվ որքան ճիշտ է նկատել Ֆրանսիացի ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ռընե Գրուսսեն, թե Ադոնցն իր կյանքի վերջին տարիներին այնքան էր առաջացել նյութերի պատրաստության մեջ, որ կարող էր «չենքը կանգնեցնելու գործը սկսել»¹⁵:

12 A. T c h o b a n i a n. La Roseaie d'Arménie. T. I-III. Paris, 1918, 1923, 1929.

13 Կ. Դ ա լ լ ա ք յ ա ն. Արշակ Չոպանյան. Երևան, 1987, էջ 363:

14 «Գրական թերթ», 1965, 29 հոկտեմբերի:

15 R e n e G r o u s s e t. Preface տե՛ս NAHA, p. IV. Հմմտ. ՆԱՀՊ, էջ 4:

Երկրորդ հանգամանքը, թեև ավելի կազմակերպչական-տեխնիկական բնույթ էր կրում, սակայն արագացրեց Ադոնցի մտահղացման իրականացումը: Հայտնի է, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) 1930 թվականից Մելքոնյան հիմնադրամի եկամուտներով տարեկան 3000 ոսկի էր տրամադրում Խորհրդային Հայաստանին հայագիտական աշխատանքների հրատարակման համար¹⁶: Մինչև 1937 թվականը այդ գումարների հաշվին հրատարակվեցին շուրջ 30 դիտական մեծարժեք ուսումնասիրություններ: Սակայն Խորհրդային իշխանությունները 1937 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ Մելքոնյան ֆոնդի գործունեությունը Հայաստանում արգելեցին¹⁷: ՀԲԸ միության կենտրոնական վարչությունը, բնականաբար, չէր կարող Հայաստանի համար նախատեսված գումարները անուշադրություն մատնել կամ օգտագործել այլ նպատակներով, ուստի 1939թ. որոշում կայացրեց այդ գումարների մի մասը հատկացնել «պատմական և դրական մեծարժեք երկերու տպագրության» համար: Իրադարձություններին քաջատեղյակ Հրանտ-Սամվելը վկայում է. «Երբ Հայաստանի գույունները բոլորովին փակվեցան տսյադիր հայություն առջև և Մելքոնյան ֆոնդի դրամները կարելի չեղավ Հայաստան փոխադրել հատկացնելու համար հայ պատմության և մշակույթի վերաբերյալ նյութերու հրատարակության, Հայ բարեգործական ընդհանուր միությունը որոշեց Մելքոնյան ֆոնդի գումարները հատկացնել արտասահմանի մեջ նույն նյութերի մասին դրվելիք գործերի տպագրության»¹⁸: Այդ աշխատանքները կազմակերպելու նպատակով ՀԲԸ միության կենտրոնական վարչությունը Փարիզում ստեղծեց Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախումբ, որի կազմի մեջ մտան նշանավոր գիտնականներ և մասնագետներ, այդ թվում Ն. Ադոնցը: Հանձնախմբի նախագահ ընտրվեց բարեգործականի պատասխանատուներից Լ. Կյումուչկերտանը (Լևոն Կերտան), իսկ քարտուղար՝ Արամ Անտոնյանը¹⁹: Հանձնախումբը կազմեց «խմբագրվելիք և մշակվելիք» դրքերի մի ցուցակ, որի մեջ տեղ դրան Ա. Չոպանյանի, Ա. Ասգըղյանի, Լ. Բաշալյանի, Ս. Տեր-Ներսեսյանի ուսումնասիրությունները, Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի «Ֆրիկի դիվանը», Արիս Վարդանյանի՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեակի մեկնություն» երկասիրության ոսկեգարյան թարգմանության քննական բնադիրը և այլն²⁰:

Հայոց պատմությունը շարադրելու Ն. Ադոնցի ծրագիրը հավանություն արժանացավ Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախմբի կողմից. «Հանձնաժողովը միաձայն որոշեց տպագրել Հայոց

16 Տե՛ս «Միություն», Փարիզ, 1929, №128, էջ 118:

17 «Խորհրդային Հայաստան», 1937, 8 դեկտեմբերի:

18 Հրանտ - Սամվել. Նիկողայոս Ադոնց. - «Ազատ Հայաստան», Իեդիս, 1943, №1, էջ 12: Հմմտ. նույնի Նիկողայոս Ադոնց. կյանքն ու գործը. - «Հայկաչեն», գիրք երկրորդ, Փարիզ, 1948, էջ 37:

19 Ա. Չոպանյան. Նիկողայոս Ադոնց. բազմապատակ բանասերը. - «Անահիտ», Փարիզ, 1949, ԺԵ տարի, №1, էջ 33:

20 Հետաքրքրությունից զուրկ չէ Ն. Ադոնցի առաջարկը Մելքոնյան հրատարակչական ֆոնդի պատասխանատուներին, թե ի՞նչ դրքեր է նպատակահարմար տպագրել (տե՛ս Համազգայինի Բեյրութի դրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան ԶԱ-8, թ. 5):

հնագույն պատմության վերաբերյալ պրոֆ. Ն. Ադոնցի աշխատությունը, որը պետք է կազմեր «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի առաջին հատորը»²¹: Հետաքրքիր է, որ հանձնախումբը խոստացավ ոչ միայն հողալ գրքի հրատարակության հետ կապված բոլոր ծախսերը, այլև իր 1939թ. մայիսի 25-ի նիստում որոշեց Ադոնցին առաջարկել միաժամանակ կազմակերպել նաև ֆրանսերեն բազմահատորյակի հայերեն թարգմանություն հարցը²²: Սույն իրողությունը հաստատում է նաև Ա. Չոպանյանը. «Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախումբը խնդրեց Ն. Ադոնցին, որ իր ֆրանսերենով գրել սկսած Հայոց պատմությունը հայերեն լեզվով ալ շարադրեք»²³: Դժվար է ասել Ն. Ադոնցը որևէ գործնական քայլ կատարել է Մելքոնյան ֆոնդի այս առաջարկն ի կատար ածելու ուղղությամբ, թե ոչ: Մեր ձեռքի տակ եղած նյութերն այդ մասին լուծում են: Սակայն մի բան ակնհայտ է նրա ամբողջ ուշադրությունն ու ժամանակը բեռնված էին ֆրանսերեն «Հայոց քննական պատմության» վրա: Բացառությամբ մեկ դեպքի, երբ նա զուգահեռաբար շարունակում էր Մովսես Կազանկատվացու Պատմության քննությունը²⁴: Համեմատության կարողով նշենք, որ եթե 1938թ. նա հրատարակել է 11 անուն ուսումնասիրություն, որից վեցը ֆրանսերենով և այդ թվում «Սամուել Հայր բուլղարների թագավոր» մենագրությունը²⁵, ապա 1939թ. հրատարակել է ընդամենը երկու հոդված, իսկ 1940 և 1941 թվականներին և ոչ մեկը: Անգամ մերժել է «Հայրենիք» ամսագրի «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ հատուկ հոդված գրելու առաջարկը և ստիպված է եղել արգարանալ. «Ցավում եմ, որ ոչ մի հնարավորություն կա դուռն հանելու այն հոդվածները, որ ծրագրել եմ տարիներ ի վեր «Հայրենիք»-ի համար»²⁶: Բնականաբար, նա զբաղված էր իր գլխավոր ծրագրի՝ «Հայոց պատմության» ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներով: Արդեն նախընթաց ուսումնասիրությունները, որ «մեծ մասով մասնավոր խնդիրների էին վերաբերում, մի տեսակ նախապատրաստություն էին ընդհանուր կարգավորյալ համագրության համար»²⁷: Նորությունը Հայաստանի նախապատմական և հնագույն դարաշրջանների պատմության հիմնահարցերն էին, որոնք Ադոնցը մանրամասն ու խորությամբ ուսումնասիրում է մասնագիտական գրականության միջոցով: Հենց սկզբից նա նախաձեռնեց Հայաստանի քննական պատմության «ամենից դժվար մասը՝ Հայաստանի հին պատմությունը, մ.թ.ա. X դարից մինչև մ.թ.ա. VI

21 Տե՛ս NAHA, p. XIII. Տարակուսանքի տեղիք է տալիս գրքի հայերեն թարգմանությունում ոչ միայն Ն. Ադոնցի կենսագրական ակնարկի, այլև նշանավոր պատմաբան, պրոֆ. Անրի Գրեգուարի գնահատական խոսքի բացակայությունը:

22 Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Գ/Ա-8:

23 Ա. Չոպանյան. Նիկողայոս Ադոնց..., էջ 33:

24 Տե՛ս Ն. Ադոնց. Քննություն Մովսես Կազանկատվացու. «Անահիտ», Փարիզ, 1939, №3, էջ 69-77, №4-5, էջ 22-31, №6, էջ 4-9, 1940, №1-3, էջ 21-29 (շարունակությունը լույս չի տեսել):

25 N. A d o n t z. Samuel L'Armenien, roi des Bulgares. Bruxelles, 1938, 63 p.

26 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1963, №5, էջ 25:

27 Գ. Հովսեփյան. Պրոֆ. Ն. Ադոնց. «Հասկ», Անթիլիաս, 1954, №3, էջ

դարը»²⁸, հարցեր, որոնք նախապես երբեք չէր հետազոտել: Ագոնցը ստիպված էր լրջորեն ու հիմնավորապես ուսումնասիրել գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով լույս տեսած շուրջ 100-ի հասնող մասնագիտական գրքեր, խեթական, ասուրական և ուրարտական արձանագրությունների տպագիր ժողովածուներ, ծանոթանալ Հայաստանի սեպագրական շրջանի պատմության բոլոր հայտնի աշխատությունների հետ:

«Հայոց քննական պատմության» կանոնավոր շարագրանքը Ագոնցը սկսեց 1939թ. ընթացքում, որը հաստատվում է Հրանտ-Սամվելի հետեյալ վկայությամբ. «Փրոֆ. Ն. Աղոնց սկսեց շարադրել ֆրանսերեն լեզվով Հայոց պատմություն մը՝ սկիզբեն մինչև մեր օրերը: 1939 թվից այս գործին պատրաստության հատկացրած էր իր ամբողջ ժամանակը»²⁹: Աղոնցն աշխատում էր մեծ թափով և սկսված գործը արագորեն առաջ էր ընթանում: Թեև սաստկացող ծանր հիվանդությունը (թոքախտ), ինչպես նաև 1940 թ. կեսերին գերմանացիների կողմից Բելգիայի ռազմակալումը դանդաղեցնում էին աշխատանքները, այնուհանդերձ, գարնան-աշնան ամիսներին նա օրնիբուն շարունակում էր աշխատանքը «Հայոց քննական պատմության» վրա: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում աշխատանքի ավարտուն մասերը հանձնում էր իր մտերիմ սաներից Հ. Էսեկյուլյանին, որը վկայում է. «Մաս առ մաս կ'առնեի իրմե՝ մեքենագրության հանձնելու»³⁰ և այսպես մինչև վերջին օրերը: Կարծես զգալով վերահաս մահվան չարագույշ շունչը և կանխագգալով, որ իր կյանքի մեծ գործը մնալու է անավարտ, Աղոնցը 1940թ. Ա. Չիլինկիրյանին դառնորեն գրում է. «Վախենում եմ, որ ծրագրած գործերս էլ մնան թերի և կամ նույնչափ վհատ, ինչպես ես»³¹: Վհատության ու հոգեկան խռով պահերից մեկի ժամանակ Հ. Էսեկյուլյանին խոստովանել է. «Պետք է ավարտել այս աշխատանքը («Հայոց քննական պատմությունը» - Պ. Հ.), դիտե՛ս թե որքան տառապագին է տարիներով հավաքել հոս՝ դիտուն մեջ ունենալ, նույնիսկ դասավորված ու չկարենալ գեթ թուղթին հանձնել: Հիմա կը զգամ, թե գործ մը երբեք չպետք է հետաձգել»³²: Ահա թե ինչու հաղթահարելով սոսկալից ցավերը, կամքի գերագույն լարումով շարունակում էր աշխատանքը և այսպես մինչև հիվանդանոց տեղափոխվելը: Հ. Էսեկյուլյանը վկայում է. «Չափազանցած չեմ ըլլար, եթե ըսեմ թե՛ գրիչը ձեռքին մեռավ, գիտակից իր կոչումին վեհուկությանը, այն հանդուգն գորավարի պես, որ ծանրորեն վիրավոր կը մնա պատնեշին վրա, զենքը ձեռքին, մինչև իր վերջին շունչը»³³: Ցավոք, Աղոնցին վիճակված չէր ավարտելու իր կյանքի մեծ գործը, նա իրոք մահացավ գրիչը ձեռքին, վերջակետ չգրած³⁴:

28 René Grousset. Preface, p. IV.

29 Հրանտ - Սամվել. նշվ. աշխ., էջ 12:

30 Հ. Էսեկյուլյան. Նիկողայոս Աղոնց. Հիշատակներ և տպավորություններ. - «Պայքար», Բոստոն, 1953, էջ 183:

31 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1963, №5, էջ 25:

32 Հ. Էսեկյուլյան. նշվ. աշխ., էջ 183:

33 Նույն տեղում:

34 Ն. Աղոնցի վերջին տարիների և օրերի մասին արժեքավոր են Մուշեղ Իշխանի հիշողությունները՝ «Փրոֆ. Ն. Աղոնցը». - «Աղալ շաբաթօրյակ», Բեյրութ, 1944, 11, 18,

1941թ. Հոկտեմբերի վերջերին Ն. Ադոնցի առողջական վիճակը կտրուկ վատթարացավ և նրան տեղափոխեցին Հիվանդանոց, որտեղ էլ մահացավ ուղիղ երեք ամիս անց՝ 1942թ. Հունվարի 27-ին: Կարծում ենք, թե միայն հավուր պատշաճի խոսքեր չեն, որ Ռ. Դարբինյանը նրա մասին գրում է այդ օրերին. «Հանձին պրոֆ. Նիկողայոս Ադոնցի հայ պատմագրությունը, հայ բանասիրությունը, հայ իրականությունը կը կորսնցնեն իրենց ամենեն ընտիր մշակներեն մեկը, իսկ հայ ժողովուրդն ալ իր ամենեն ազնվական գավակներեն մեկը: Ցավալի է նրա մահը մանավանդ, որ կիսատ ձգեց իր գործը: Վերջին տարիները ձեռնարկած էր «Հայոց քննական պատմության» պատրաստության, բայց չենք դիտեր, թե որ աստիճան առաջ տարած էր այդ աշխատությունը»³⁵:

Ն. Ադոնցի մահվան առիթով Փրանսահայ մտավորականները, Ա. Չոպանյանի և Հ. Զավրյանի նախաձեռնությամբ, 1942թ. ապրիլի 12-ին Փարիզի սրահներից մեկում կազմակերպում են հիշատակի հավաքույթ³⁶: Այստեղ որոշվում է ստեղծել հանձնախումբ՝ Ն. Ադոնցի թողոնի նյութերն ուսումնասիրելու, իսկ գրադարանը Փարիզի Նուպարյան գրադարան տեղափոխելու համար:

Առավել մտահոգողն, անշուշտ, «Հայոց քննական պատմության» ճակատագիրն էր: Ա. Չոպանյանի առաջարկով Բրյուսել ուղարկվեց հանգուցյալի վաղեմի բարեկամ, իրավաբան Հովհաննես Զավրյանը: Բրյուսելում ծանոթանալով Ն. Ադոնցի թողոնի նյութերի հետ՝ Զավրյանն այստեղ որևէ ավարտուն գործ չգտավ, բացառությամբ Փրանսերենով շարադրված «Հայոց քննական պատմության» առաջին հատորի: Փարիզ վերադառնալուց հետո Զավրյանը դրա մեքենագիր օրինակը հանձնեց Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախմբին, որն իրավաբանորեն հանդիսանում էր ոչ միայն այդ գրքի պատվիրատուն, այլև նրա սեփականատերը: Ա. Չոպանյանի, Հրանտ-Սամվելի, Ա. Խոնդկարյանի հավաստմամբ Զավրյանը Ադոնցի մնացած ամբողջ ձեռագիր ժառանգությունը հանձնել է Փարիզի Նուպարյան մատենադարանին, իսկ գրադարանը թողել Բրյուսելի հայ համայնքին³⁷: Իրադարձություններին քաջատեղյակ Ա. Չոպանյանը հավաստում է. «Զավրիև իր հետ բերավ ձեռագիրը՝ Ադոնցի Փրանսերեն լեզվով շարադրված Հայոց պատմության առաջին մասի»³⁸: Տարիներ անց, 1952 թվականին Փրանսիացի պատմաբան Ռրեն Գրուսեի հիշատակին նվիրված իր խոսքում Ա. Չոպանյանը հարկ է համարել կրկնելու, թե Զավրյանի բերածը Ադոնցի «անավարտ կարևոր գործի մի մասն

25 օգոստոսի, 1, 15, 22, 29 սեպտեմբերի, 6, 13 հոկտեմբերի: «Փրոֆ. Ն. Ադոնց/Հուշեր և տպավորություններ».— «Ազդարար», Բեյրութ, 1951, 12, 19, 26 հեկտեմբերի, 2, 16 նոյեմբերի, 7, 14, 21 դեկտեմբերի: «Փրոֆ. Ն. Ադոնց».— «Հայրենիք», 1951, №7, էջ 22–43: «Երեք մեծ հայերը. փրոֆ. Նիկողայոս Ադոնց», Բեյրութ, 1952, էջ 5–41: «Իմ ուսուցիչներս. Փրոֆ. Նիկողայոս Ադոնց». Բեյրութ, 1984, էջ 37–69:

35 «Հայրենիք», Բոստոն, 1942, 11 փետրվարի. Հմմտ. 12 փետրվարի:

36 Տե՛ս Համազդաչիի Բեյրութի դրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Ե/Ա–8:

37 Ա. Չոպանյան. Նիկողայոս Ադոնց..., էջ 34:

38 Նույն տեղում:

էր»³⁹: Նույնն է հավաստում նաև Արշամ Խոնդկարյանը. «Պատերազմի շրջանում, երբ մենք բոլորս զրկվեցինք հնարավորությունից որևէ բան հրատարակելու, Հ. Զավրյանը զբաղվեցավ Ն. Աղոնցի թողած ձեռագիրները կարգի բերելով: Այդ ձեռագիրների մեջ էր Փրանսերեն լեզվով գրված «Հայոց պատմության» առաջին հատորը»⁴⁰:

Այսպիսով, 1942 թվականին Հ. Զավրյանը Բրյուսելից Փարիզ է բերել Ն. Աղոնցի «Հայոց քննական պատմության» առաջին հատորի հեղինակային մեքենագիր օրինակը, այն էլ, ինչպես կտեսնենք, անավարտ: Շուտով պարզվում է, որ աշխատանքը տպագրության պատրաստ չէր նաև տեխնիկական տեսակետից և կարիք ունեւր լեզվաոճական որոշակի խմբագրման: Հ. Զավրյանը ազնվորեն ու մեծ նվիրումով ստանձնեց «հրատարակության հետ կապված բոլոր աշխատանքները՝ index-ի պատրաստում, քարտեզ, սրբագրություն, հեղինակի կենսագրություն և այլն»⁴¹: Ցավոք, Հ. Զավրյանի հիվանդության և ապա վերահաս մահվան պատճառով (10 նոյեմբերի 1945 թվական) աշխատանքները գարձյալ ընդհատվեցին: Գրքի հրատարակության հետ կապված հետագա աշխատանքներն իրականացրեց Ա. Չոպանյանը⁴²: Հենց Չոպանյանի առաջարկով էր, որ Մելքոնյան հրատարակչական հանձնախումբը «Հայոց քննական պատմության» ընդհանուր խմբագրումը հանձնարարեց ակադեմիկոս Ռոնե Գրուսեին: Ֆրանսիացի պատմաբանը ոչ միայն «հղկումի և սրբագրումի հոգնեցուցիչ աշխատանքը կատարեց այդ ամբողջ ստվար հատորի»⁴³, այլև «Մեծ գիտնականի վերջին գրքի համար գրեց հատուկ առաջաբան»⁴⁴: 1946թ. ապրիլի վերջերին գիրքն արգեն պատրաստ էր տպագրության: Դա է հավաստում 1946թ. ապրիլին Պ. Քոլոլյանին հղած Ա. Չոպանյանի նամակը. «Մյուս կողմն պարտք կհամարենք Ձեզի հայտնել, թե ողբացյալ փրոֆեսոր Նիկողայոս Աղոնցի հոյակապ գործը՝ Հայոց պատմության սկզբնական շրջանի մասին, որին տպագրության ավարտումը հանգուցյալ Հ. Զավրիևի հիվանդության պատճառով հապաղած էր, ի մոտո պիտի պատրաստ ըլլա հրատարակելուն»⁴⁵:

Ի վերջո, 1946թ. կեսերին «Հայոց քննական պատմության» առաջին մասը, որ կրում էր «Հայաստանի պատմություն: Ակունքները» խորագիրը, լույս տեսավ «Imprimerie de Navare» հրատարակչության կողմից: Աշխատությունը բաղկացած է չորս գլխից՝ 1. Նախապատմական գարաշը-

39 Ա. Չոպանյան. Ռոնե Գրուսե. «Հասկ», Անթիլիաս, 1952, №10-12, էջ 541:

40 Ա. Խոնդկարյան. Հովհաննես Զավրյանի հիշատակին. «Ալիք», Թեհրան, 1946, 19 ապրիլի:

41 Նույն տեղում:

42 Տե՛ս NAHA, p. XIII. Տարակուսելի է գրքի հայերեն թարգմանությունում Ուրարտուի քարտեզի բացակայությունը, որը մասնագիտական գրականության մեջ առաջիններից մեկն էր:

43 Նույն տեղում:

44 René Grousset. նշվ. աշխ., էջ 3-8: Ռոնե Գրուսեի սույն Առաջաբանի հայերեն թարգմանությունը. «Պայքար», Բոստոն, 1950, էջ 5, «Ազգարար», Բեյրութ, 1951, 27 հունիսի, էջ 6, 7, 3 օգոստոսի, էջ 10, ՆԱՀՊ, էջ 3-8:

45 Տե՛ս Ա. Չոպանյան. Նամականի, կազմեց և ծանոթագրեց Գոհար ԱզնաՎուրյանը. Երևան, 1980, էջ 257:

ջան (հնադիտական պեղումների արդյունքների վերլուծությունը)⁴⁶, 2. Հայաստանը հնագույն դարաշրջանում (Հայասա, Իշուվա, Ալշի. Նաիրի)⁴⁷, 3. Ուրարտու պետությունը (ըստ ասուրական աղբյուրների)⁴⁸, 4. Ուրարտու պետությունը (ըստ իր վավերագրերի)⁴⁹: Գլուխը ավարտվում է «Ուրարտուի վախճանը և նրա պատմական դերը» եզրափակիչ հատվածով:

Ենթադրում ենք, որ Ն. Ադոնցի կանոնավոր աշխատանքը գրքի վրա ընդհատվել է հենց այստեղ: Մյուսները հավելվածներ են, որ կիսավարտ աշխատանքին ավելացվել են հետագայում՝ Ն. Ադոնցի մահից հետո: Անկասկած է, որ այդ հավելումները կատարել է Հ. Զավրյանը, նա, ով առաջինն էր ծանոթացել հանգուցյալ պատմարանի թողոնի նյութերի հետ և իր վրա պարտականություն վերցրել կատարել գրքի հրատարակության հետ կապված բոլոր աշխատանքները: Ձեռքի տակ ունենալով 375 էջանոց մեքենագիր տեքստը, որն ավարտվում էր «Ուրարտուի վախճանը և նրա պատմական դերը» եզրափակիչ հատվածով՝ Հ. Զավրյանը որպես հավելված դրան ավելացրել է նաև Ն. Ադոնցի «Հայերի ծագումը» անավարտ ուսումնասիրությունը, ինչպես նաև առավել ավարտուն տեսք ունեցող «Ասուրական արչավանքները Ուրարտուի դեմ»⁵⁰, «Հայաստանը և ցեղերի պայքարը Արևելքում», «Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում» և «Վաղ շրջանի փոխառությունները Հայաստանում» հոդվածները⁵¹, որոնք ոչ մի կերպ չեն աղերսվում ավարտուն այնպիսի տեքստերի հետ, ինչպիսիք են նախորդ չորս գլուխները: Չափազանց ակներև է այս բոլորի մեխանիկական, անդամ կամայական միավորումը մեկ ամբողջության մեջ: Այս համոզման օգտին են խոսում նաև հետևյալ փաստերը: Ն. Ադոնցի թողոնում առկա են «Հայաստանի պատմությունը» գրքի ֆրանսերեն մեքենագիր երկու օրինակներ, յուրաքանչյուրը 375 մեքենագիր էջ⁵²: Բացի այդ, թողոնում առկա են նաև առանձին մեքենագրված (միանդամայն այլ տառատեսակով) ֆրանսերեն տպագիր 291-րդից 405-րդ էջերի, այսինքն՝ հավելվածի, նյութերը⁵³: Պարզ է, որ դրանք հիմնական չորս գլուխներին են միացվել հետագայում, բոլոր դեպքերում ոչ Ադոնցի կողմից հատորին քիչ թե շատ ավարտուն տեսք տալու միտումով: Բացի այդ, մենք ունենք նաև Արչակ Սաֆրաստյանի ուղղակի ցուցումն այն մասին, որ 1940 թվականի ընթացքում Ադոնցն արդեն ավարտել էր իր «Հայոց քննական պատմությունը»՝ Ուրարտուին նվիրված մասը, իսկ գրքում զետեղված մյուս նյութերը հավելումներ էին⁵⁴:

46 Տե՛ս NAHA, p. 1–16, հմտ. ՆԱՀՊ, էջ 9–23:

47 Տե՛ս NAHA, p. 17–61, հմտ. ՆԱՀՊ, էջ 24–66:

48 Տե՛ս NAHA, p. 62–143, հմտ. ՆԱՀՊ, էջ 67–146:

49 Տե՛ս NAHA, p. 143–287, հմտ. ՆԱՀՊ, էջ 147–285:

50 Անհնայտորեն այս հատվածն իր տեղում չէ, բնական է, որ այն պետք է տեղ գտներ աշխատության 2-րդ կամ 3-րդ գլուխներից մեկում:

51 NAHA, p. 291–405, հմտ. ՆԱՀՊ, էջ 287–392:

52 Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գրող Բ, թղթածրար 4, թ. 1–375 (անկասկած Հ. Էսեկյուլյանի մեքենագրած օրինակներն են):

53 Նույն տեղում, թղթածրար 5, հմտ. թղթածրար 6:

54 Ա. Ս ա ֆ Ր ա ս տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 730:

Ինչևհիգե, անգամ այս տեսքով Ն. Աղոնցի կատարած աշխատանքը զիսական ու քաղաքացիական սխրանք էր: Առաջին անգամ էր, որ Հայ ժողովրդի պատմության ուղեծրի մեջ տեղ էին գտնում Հայաստանի, Իշուվայի, Նախրիի, Ուրարտուի պատմության հարցերը, դրանք դիտվում էին մի ամբողջության մեջ, որպես միասնական երկրի՝ Հայաստանի և մեկ միասնական հայրենիքի բաղկացուցիչ մասեր: Եվ որքան ճիշտ է նկատել ակագեմիկոս Խրեն Գրուսեն գրելով. «Ափսոսալի է, որ անգութ ճակատագրի երեսից Աղոնցի սկսած Հայաստանի մեծ պատմությունը կանգ է առնում առաջին իսկ գլուխներում: Ափսոսանքն ավելի ցավալի է դառնում, մանավանդ այն պատճառով, որ այդ գլուխների հաջողությունը մեղ կատարյալ է թվում: Այնուամենայնիվ, մենք անչափ ուրախ ենք, որ այսպիսով մեր ձեռքի տակ ունենք ըստ ամենայնի մի կատարյալ գործ Հայոց պատմության այն մասի վերաբերյալ, որը մինչև հիմա շատ քչերին էր մատչելի, եթե ոչ բոլորին անծանոթ: Դա հռչակավոր գիտնականի կողմից մի փառավոր նվեր է իր հայրենակիցներին, քանի որ Աղոնցը նրանց վերադարձնում է մոտավորապես տասր դար: Սա Աղոնցի մահվան ժամին ընծայած արքայական պարգևն է իր երկրին, որի պատմությունը նա կրկնապատկում է»⁵⁵:

Վերոշարադրվածից ակներե է, որ Ն. Աղոնցի «Հայոց քննական պատմությունը» պետք է լիներ բազմահատոր մի աշխատություն և պատահական չէ, որ Ա. Չոպանյանը լույս տեսած Ֆրանսերեն գիրքն անվանում է «Քննական ընդարձակ Հայոց պատմության առաջին մասը»⁵⁶: Նույնն է հավաստում նաև Մատթեոս Արամ Գալենտերը, որն Աղոնցին նվիրված իր հուշերում շեշտում է, թե լույս տեսած Ֆրանսերեն գիրքը «պիտի ըլլար առաջին հատորը Ընդհանուր Հայոց պատմության: Աղոնց եկած է մինչև ուրարտական շրջանին պատմության վերջավորությունը, բայց կարելի չէ եղած լրացնել հեղինակին տարածած ե դառնակսկիծ մահվան պատճառով»⁵⁷:

Այս բոլորից հետո ընթերցողին բնականաբար պետք է հետաքրքրի մի կարևորագույն հարց: Արդյո՞ք տպագրված Ֆրանսերեն հատորով ավարտվում են Ն. Աղոնցի «Հայոց քննական պատմության» նյութերը, թե

55 ՆԱՀՊ, էջ 8 (ընդգծումը մերն է—Պ. Հ.): Պետք է նկատել, որ Ն. Աղոնցի մահից հետո Խ. Գրուսեն ինքը ձեռնամուխ եղավ երկհատոր «Հայոց պատմության» ստեղծման աշխատանքներին և 1947թ. Փարիզում հրատարակեց «Histoire de l'Arménie, des origines à 1071. T. I. Avec dix cartes et cinq tableaux généalogiques. Paris, 1947, 647 p.» աշխատությունը: Ցավոք, նա չհասցրեց գրել «Հայոց պատմության» երկրորդ հատորը և մահացավ գիրքն ավարտելուց առաջ: Առաջին հատորի առաջաբանում Խ. Գրուսեն չի վարանում շեշտելու, թե ինքը «չափազանց օգտվել է մեծանուն Ն. Աղոնցի «Հայոց քննական պատմության» լույս տեսած հատորի նյութերից և իր հիմնական եզրահանգումները հենվում են նրա ուսումնասիրությունների արդյունքների վրա»: Խ. Գրուսեի կողմից «Հայոց պատմություն» աշխատությունը գրելու հանգամանքների մասին հետաքրքիր են Սորրոնի համալսարանի պրոֆեսոր Առաքել Չաքրյանի «Խրեն Գրուսե ինչ ու է ինչպե՞ս գրեց իր «Հայոց պատմությունը»—ը» (տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1952, 31 հոկտեմբերի, էջ 1, 3) և Հրանտ-Սամվելի «Խրեն Գրուսե» (տե՛ս «Յուսարբեր», Կահիրե, 1952, 24 սեպտեմբերի, էջ 1) հոդվածները:

56 «Անահիտ», 1949, №1, էջ 33:

57 Գ ա լ ե ն տ ե Ր Մ ա տ թ ե ո ս. Նիկողայոս Աղոնց և իր «Պուլկարաց թագավոր Սամուել Հայագգի».— «Պայքար», Բոստոն, 1961, էջ 76 (ընդգծումը մերն է — Պ. Հ.):

Հնարավոր են նաև այլ նյութերի (հնարավոր է անգամ ավարտուն) առկայությունը նրա թողոնում: Չէ՞ որ պատմաբանը սովորություն ուներ միաժամանակ զբաղվելու նաև այլ պատմաչրջանների առանձին առանցքային հարցերի մշակմամբ: Այդ հարցին կարող էր լիարժեք պատասխան տալ միայն նրա թողոնի մանրամասն ուսումնասիրությունը: Երկար տարիներ անհայտ էր, թե որտե՞ղ է գտնվում պատմաբանի թողոնը և ընդհանրապես այն գոյություն ունի, թե ոչ: Դրա հետքերը կորչում էին ինչ-որ տեղ՝ Փարիզում: Բոլոր դեպքերում այն տեղ չի գտել Նուպարյան Մատենադարանի արխիվում, ինչպես հավաստում էին Հրանտ-Սամվելը, Ա. Չոպանյանը և ուրիշներ⁵⁸, քանզի Ադոնցի թողոնն այնտեղ փնտրելու ուղղությամբ փորձերը որևէ դրական արդյունքի չէին հանգել: Ահա թե ինչու առավել հավանական էր համարվում այդ թողոնի հնարավոր ցավալի կորուստը, քան ինչ-որ տեղ գտնվելու հավանականությունը: Բարեբախտաբար ադոնցյան թողոնը, իրբեք բարեպատեհ բերումով, ոչ միայն փրկվել էր, այլև հանգրվանել այնպիսի մի հուսալի վայրում, ինչպիսին է Համազգայինի Բեյրութի դրական պահոցը: Թե ե՞րբ և ի՞նչ ճանապարհով է այն հայտնվել այստեղ, կարելի է միայն ենթադրել:

1992–1993 թվականների ընթացքում հնարավորություն ունեցանք ծանոթանալու թողոնի նյութերի հետ: Դրանք չափազանց անկանոն և անխնամ դասավորված էին քսան թղթածրարներում⁵⁹: Այժմ անգրադադանանք նախապես մեզ հետաքրքրող հարցին, արդյո՞ք Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմություն» այլ հատվածներ կամ ըստինքն առկա են այստեղ, թե ոչ: Հենց սկզբից պետք է դրականորեն պատասխանել այս հարցադրումներին: Դրանք առկա են և բավականին զգալի քանակությամբ: Ադոնցի ձեռագիր նյութերի մեջ գերազանցում են հայերի և Հայաստանի մասին տարաբնույթ և տարալեզու (հունական, լատինական, արաբական, ասորական, պարսկական և այլն) սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ, ժամանակագրական աղյուսակներ ու հաշվարկներ, արդեն ֆրանսերենով (հիմնականում), ռուսերենով և հայերենով շարադրված ամբողջական բաժիններ (հիմնականում թերի, երբեմն էլ ավարտուն): Մենք ցուցակագրեցինք եղած ամբողջ նյութն ու փորձեցինք կազմել ցանկ, որից հետո հնարավոր եղավ «Հայոց քննական պատմության» առկա նյութերը դասակարգել ըստ պայմանական ըստինքնների և սովորադժեղ հատորների հերթականությունը՝ պայմանական, քանզի այդ ըստինքնում հեղինակային չէ:

Թողոնում առկա նյութերի մի խումբն ավարտվում է մ.թ. I դարի կեսերի, իսկ մյուսը սկսվում է մ.թ. V դարի կեսերի պատմությամբ: Նկատելի է մ.թ. I–IV դարերի պատմության վերաբերյալ շարադրանքի, և անգամ նյութերի, իսպառ բացակայությունը. դա հիմք է տալիս մեզ ենթադր-

58 Կ. Ն. Յոսեֆյան. Նիկողայոս Ադոնցի դիտական ժողովությունը. «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 117, հմտ. «Յուսաբեր», Կահիրե, 1973, 15 հունիսի, № 61, 16 հունիսի, № 62, նաև՝ «Ալիք», Թեհրան, 1973, 30 հունիսի, № 111:

59 Ն. Ադոնցի թողոնի ընդհանուր նկարագրի համար տե՛ս մեր և Ե. Փամպուլյանի հրատարակումները. «Ազգակ», Բեյրութ, 1993, 9 մարտի, էջ 4, 7, «Ազատամարտ», Երևան, 1993, 9–15 ապրիլի, էջ 13 և այլն: Օգտվելով առիթից մեր խորին շնորհակալություն ենք հայտնում Ե. Տասնապետյանին և Ե. Փամպուլյանին Ադոնցի թողոնի նյութերի հետ ծանոթանալու հնարավորություն ընձեռելու համար:

րելու, որ նշված դարերը եղել են «Հայոց քննական պատմության» երկրորդ և երրորդ հատորների բաժանման սահմանագիծը: Դրա օգտին են խոսում նաև ուրվագծված հատորների ծավալային տվյալները՝ յուրաքանչյուրը մոտ 600 ձեռագիր էջի սահմաններում: Ենթադրելի է, որ երկրորդ հատորը պետք է ունենար հետևյալ կառուցվածքը.

1. Արմենների երթուղին Փոյուզիայից-Ուրարտու (Ֆրանսերեն, 95 էջ, բազմաթիվ էջեր թափված)⁶⁰,

2. Մարական կայսրություն. կազմավորումը, զարգացումը (ռուսերեն, 28 էջ, որոշ էջեր թափված),

3. Հայաստանը Մարական կայսրության կազմավորումից մինչև Կունաքսայի ճակատամարտը՝ Օրոնտաս-Երվանզի և Տիրիբաղոսի օրոք (Ֆրանսերեն, 81 էջ, բազմաթիվ էջեր թափված),

4. Երկրամաս և բնակչություն. XIII և XVIII սատրապությունները. կազմավորումը, հարկերը (Ֆրանսերեն, 10 էջ),

5. Բսենոփոնի նահանջի երթուղին Հայաստանում (Ֆրանսերեն, 9 էջ),

6. Երվանդունիները Հայաստանում Աքեմենյանների օրոք (հայերեն, 11 էջ),

7. Հայաստանը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների շրջանում (ռուսերեն, 8 էջ),

8. Արևելքը մակեդոնական տիրապետության շրջանից մինչև մ.թ. I դարի կեսերը՝ մ.թ.ա. 334թ. - մ.թ. 66թ. (Ֆրանսերեն, 143 էջ),

9. Միհրդատ Եվպատոր (Ֆրանսերեն, 8 էջ),

10. Տիգրան Մեծ (Ֆրանսերեն, 10 էջ),

11. Տիգրան Մեծն ըստ Մոմգենի և Ռեյնաքի: Անտիկ սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ Տիգրան Մեծի մասին (Ֆրանսերեն, 40 էջ),

12. Լուկոլլոսի և Պոմպեոսի արշավանքները Հայաստան (Ֆրանսերեն, 20 էջ),

13. Մարկոս Կրասոսի Արևելյան արշավանքը. Արտավազգ II (Ֆրանսերեն, 32 էջ, որոշ էջեր թափված),

14. Մարկոս Անտոնիոս (Ֆրանսերեն, 12 էջ),

15. Հայ Արշակունիների թագավորության կազմավորումը. մ.թ. 12-66 թթ. (Ֆրանսերեն, 40 էջ),

16. Հայ-պարթևական հարաբերությունները մ.թ. 16-66թթ. (Ֆրանսերեն, 60 էջ),

17. Տրդատ I Արշակունու ճանապարհորդությունը Հռոմ և Արտաշատի նորոգումը (Ֆրանսերեն, 7 էջ):

Բացի նշվածներից, առանձին թղթածրարներում առկա են նաև մ.թ.ա. VI - մ.թ. I դդ. Հայոց պատմությանը վերաբերող 160 էջ ռուսերենով նոթեր, նյութեր, ժամանակագրական տախտակներ, աղբյուրագիտական ու

60 էջակալումը և խորագրերը հիմնականում հեղինակային են: Բացակա էջերը դեռևս ապացույց չեն դրանց կորստի, ավելի ուշագիտելի և մանրադննի քննությունը կարող է դրանք ի հայտ բերել այլ թղթածրարներում, որոնցում առկա էին մեղ համար անորոշ մնացած բազմաթիվ թղթեր:

պատմագիտական առանձին վկայություններ: Այսպիսով, երկրորդ հատորի նյութերը ժամանակագրական առումով վերաբերում են մ.թ.ա. VII դարի վերջերից մ.թ. I դարի վերջերը, ընդգրկելով 800 տարվա պատմություն: Ամբողջը կազմում է 614 ձեռագիր էջ, որից ֆրանսերեն – 567, ռուսերեն – 36, հայերեն – 11 էջ:

Հավանաբար երրորդ հատորի բովանդակությունը պետք է կազմեն հետևյալ դիուխները՝

1. Հայաստանը 350–387 թվականներին (ֆրանսերեն, 54 էջ),
2. Պարսկա-բյուզանդական հարաբերությունները V–VI դարերում և Հայաստանի ճակատագիրը (ռուսերեն, 96 էջ)⁶¹,
3. Պարսկա-բյուզանդական պատերազմները VI դարի կեսերից – նույն դարի վերջերը և Հայաստանը (ռուսերեն, 80 էջ),
4. Հոգատիրությունից ձևերը, հարկերն ու տուրքերը Արշակունյաց և մարզպանության պատմաշրջաններում (հայերեն, 30 էջ),
5. Հայաստանը 849–902 թվականներին (հայերեն, 43 էջ),
6. Հայաստանի պատմությունը Աշոտ II Երկաթից մինչև Մելիք շահի տիրապետությունը (ֆրանսերեն, 100 էջ),
7. Բաղրատունյաց թագավորության անկումը (հայերեն, 5 էջ),
8. Սյունյաց թագավորությունը (հայերեն, 16 էջ),
9. Զաքարյան Հայաստանի պատմությունը (հայերեն, 40 էջ),
10. Հայ ազատագրական շարժումները 1547–1711 թվականներին (հայերեն, 11 էջ),
11. Պետրոս Մեծի և Իսրայել Օրոն բանակցությունները (հայերեն, 36 էջ, բազմաթիվ էջեր թափված),
12. Դավիթ Բեկի պատերազմներն ըստ Ստեփանոս Շահումյանի (հայերեն, 12 էջ):

Ժամանակագրական առումով այս հատորի նյութերի շարադրանքը վերաբերում է IV–XVIII դարերի պատմությանը, ընդգրկելով շուրջ 1200 տարվա դեպքեր: Ամբողջը կազմում է 520 ձեռագիր էջ, որից ֆրանսերեն – 154, ռուսերեն – 176, հայերեն – 190 էջ:

Բացի այդ, առանձին թղթածրարներում խնամքով դասավորված են V–IX դարերի հայոց պատմությանը վերաբերող բյուզանդական սկզբնաղբյուրներից քաղված 300 էջից ավելի ֆրանսերենով ու հայերենով նյութեր, նոթեր, ժամանակագրական աղյուսակներ, բյուզանդական կայսրերի ու արաբական խալիֆաների, հայոց կաթողիկոսների գավազանացանկեր:

Արդյո՞ք «Հայոց քննական պատմությունն» ավարտվելու էր այս երեք հատորների շրջանակում (հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջերը), թե ունենալու էր ևս մեկ՝ XIX–XX դարերի պատմության հարցերն ընդգրկող հատոր, դժվար է ասել: Սակայն թողոնում նշված դարերի պատմությանը վերաբերող առանձին նյութերի առկայությունը վկա-

⁶¹ Եղած բոլոր նյութերից այս բաժինն առավել մշակվածն է և պատրաստ տպագրության համար:

յուժ է այն բանի օգտին, որ ավելի քան հավանական վերջին չորրորդ հատորի, եթե ոչ շոշափելի իրողությունը, ապա գոնե ուրվագիծը⁶²:

Այսպիսով, վերոշարագրանքը ցույց է տալիս, որ կյանքի վերջին տարիներին պրոֆ. Ն. Աղոնցը ծրագրել էր տարիների իր պատմագիտական աշխատանքների արգյունքները հանրագումարի բերել «Հայոց քննական պատմություն» քառահատոր աշխատության մեջ (հնագույն ժամանակներից մինչև XX դարի սկիզբը): Սակայն նա հասցրել է մասամբ ավարտել միայն առաջին հատորը (հայկական հնագույն ցեղային միությունների և Ուրարտուի պատմության ժամանակաշրջանները): Մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ Ն. Աղոնցը միաժամանակ աշխատել է նաև երկրորդ և երրորդ հատորների վրա, նախապես շարագրել ամբողջական գլուխներ, անգամ բաժիններ, հավաքել նյութեր, սկզբնաղբյուրային վկայություններ, կազմել ժամանակագրական տախտակներ ու գավազանացանկեր: Խոսքը վերաբերում է գլխավորապես վերջնական խմբագրման չենթարկված նյութերին, որոնք բոլորն էլ, բացառությամբ առանձին գեպերի, դեռևս անմշակ նյութեր են:

Նկատի ունենալով աղոնցյան անտիպների էական, երբեմն բացառիկ կարևորությունը պատմագիտության համար, կարծում ենք, որ անհրաժեշտ է շուտափույթ ի մի հավաքել դրանք և լույս ընծայել առանձին հատորներով: Անգամ այդ վիճակով դրանք կարող են օգտակար լինել մեր պատմության ավելի ընդգրկուն ուսումնասիրման համար:

ТВОРЧЕСКАЯ СУДЬБА ТРУДА Н. АДОНЦА "КРИТИЧЕСКАЯ
ИСТОРИЯ АРМЕНИИ"
(К 130-летию со дня рождения)

ПЕТРОС ОГАНИСЯН

Р е з ю м е

Выдающийся историк, арменовед, византист, профессор Санкт-Петербургского и Брюссельского университетов Никогайос Адонц (1871 – 1942) – автор около 100 научных исследований. Его монография "Армения в эпоху Юстиниана" (СПб., 1908) считается достижением классического арменоведения. В парижский (1921 – 1931) и брюссельский (1931 – 1942) периоды своего творчества Н. Адонц занимался изучением различных вопросов армяно-византийских исторических связей. В 1939 г. Н. Адонц прекращает исследования в этой области и приступает к созданию "Критической истории Армении". Ученый намеревался изложить на французском языке в трех – четырех томах историю армянского народа с древнейших времен до современности. Этим трудом Н. Адонц стремился ознакомить европейскую общественность с исто-

62 Արդյո՞ք դրա օգտին չի խոսում թողոնում Հայկական հարցին վերաբերող մի շարք հոդվածների ուրվագծերի առկայությունը (ավելի մանրամասն տե՛ս Ն. Աղոնցի «Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 1996):

рическим прошлым армянского народа, показать его место и роль в мировой цивилизации. Н. Адонц успел завершить лишь I том, охватывающий историю древнейших армянских племенных союзов (Наири, Хайаса) и Урарту. Труд "Критическая история Армении" вышел в свет в Париже в 1946 г., уже после смерти автора. В архиве Н. Адонца, хранящемся в Бейруте, нами были обнаружены материалы, относящиеся к большому периоду истории армянского народа – с VII в. до н.э. до XVIII в. Они бесспорно свидетельствуют о том, что ученый одновременно работал над отдельными главами II и III томов своего труда.

THE CREATIVE FATE OF N. ADONTS' WORK "CRITICAL HISTORY OF ARMENIA"

(To the 130th anniversary of his birth)

PETROS HOVHANNISYAN

S u m m a r y

The outstanding historian, Armenologist, Byzantinist and professor of Saint-Petersburgh and Brussels Universities, Nikoghayos Adonts (1871–1942) is the author of about 100 academic publications. His monograph "Armenia in the Epoch of Justinian" is considered to be an achievement of classical Armenology. During the Parisian (1921–1931) and the Brussels (1931–1942) periods of his creative work Adonts was engaged in studying different questions of the Armenian-Byzantine historical links. In 1939 Adonts stopped his investigations in this sphere and started writing "The Critical History of Armenia". He sought to relate the history of the Armenian people from ancient times to the present in the French language in three or four volumes. In that work Adonts introduced the history of the Armenian people to European society and indicated Armenia's role in the world civilization. Adonts managed to finish only the first volume, which embraced the history of the ancient Armenian tribal unities (Nairy, Hayasa) and Urartu. The work, "The Critical History of Armenia", was published in Paris in 1946, after the author's death. In Adonts' archive, which is kept in Beirut, we found materials related to a long period of history of the Armenian people – from the 7th c. B. C. to the 17th c. A. D. These materials bear witness to the fact that Adonts had already worked on separate chapters of the second and third volumes of his work.